



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

☒ ք. Վանաձոր, Հայքի Հրապարակ 1

☎ /0322/ 4-61-92

Fax /0322/ 2-07-70

թիվ \_\_\_\_\_

« \_\_\_\_\_ » \_\_\_\_\_ 2019 թ.

«Հայկական առողջապահական ազգային խորհուրդ»  
քաղաքացիական հասարակական կազմակերպություն  
կոալիցիայի փաստաբան Պավլիկ Փոլադյանին  
/ք. Երևան, Փափազյան 13 ա/  
[pavlik.poladyan@mail.ru](mailto:pavlik.poladyan@mail.ru)  
հեռ. 099-69-67-60

Ձեր 17.10.2019թ. գրությանը.

Հարգելի պարոն Փոլադյան  
Տեղեկացնում եմ Ձեզ, որ.

1. «Ալավերդու բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի տնօրենի թափուր պաշտոնի համար հայտարարված մրցույթը կայացել է ՀՀ Լոռու մարզպետարանում 2019 թվականի հոկտեմբերի 8-ին՝ համաձայն ՀՀ կառավարության 2011թ. հուլիսի 7-ի «Առողջապահական պետական ոչ առևտրային կազմակերպությունների և հարյուր տոկոս՝ պետությանը սեփականության իրավունքով պատկանող բաժնեմաս ունեցող առողջապահական բաժնետիրական ընկերության գործադիր մարմնի ընտրության (նշանակման) մրցույթի օրինակելի կարգը և նրանց հետ կնքվող աշխատանքային պայմանագրերի օրինակելի ձևերը հաստատելու մասին» թիվ 992-Ն որոշման և ՀՀ Լոռու մարզպետի 2011թ. դեկտեմբերի 22-ի թիվ 440-Ն որոշման պահանջների:
2. ՀՀ Լոռու մարզպետի 2019թ. հոկտեմբերի 7-ի թիվ 583-Ա որոշմամբ ստեղծվել է «Ալավերդու բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի տնօրենի թափուր պաշտոնն զբաղեցնելու համար մրցույթ անցկացնող մրցութային հանձնաժողով:
3. Գևորգ Ազարյանի կողմից կազմակերպության զարգացման նախնական ծրագիրը ներկայացվելուց հետո անց է կացվել փակ գաղտնի քվեարկություն, որին մրցութային հանձնաժողովի յուրաքանչյուր անդամ իրավունք ունի քվեարկել «կողմ» կամ «դեմ», որով և առաջնորդվել են նրանք: Համաձայն վերոնշյալ որոշումների պահանջների՝ հանձնաժողովը ընդունել է որոշում մրցույթի արդյունքում հաղթող չճանաչելու մասին և այդ որոշումն ուղարկվել է լիազոր մարմնի ղեկավարին:  
Հանձնաժողովի որոշումը՝ մրցույթի արդյունքում հաղթող չճանաչելու մասին, Գևորգ Ազարյանի կողմից բողոքարկվել է, և համաձայն վերոնշյալ որոշումների պահանջների, կազմվել է հանձնաժողով /լիազոր մարմնի և առողջապահության բնագավառի պետական լիազոր մարմնի հավասար՝ երկուական ներկայացուցիչներից/, որի եզրակացությունը ևս

ուղարկվել է լիազոր մարմնի ղեկավարին, որի հիման վրա կայացվել է որոշում մրցույթի արդյունքը կոնկրետ մասնակցի վերաբերյալ անփոփոխ թողնելու մասին:  
Առդիր՝ 2 էլ. նյութ: /Կցվում է ՀՀ Լոռու մարզպետի 2019թ. հոկտեմբերի 7-ի թիվ 583-Ա որոշումը՝ հավելվածով/:

21.10.2019

X 

ԱՆԴՐԵՅ ՂՈՒԿԱՍՅԱՆ

ՄԱՐԶՊԵՏ՝

Ա. ՂՈՒԿԱՍՅԱՆ